



Երկուշաբթի, 9 Նոյեմբեր, 2020

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, զոր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս եմ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 51

ՆԵՐՈՒՄԻ ԽՆԴՐԱՆՔ

Ողորմէ ինձի, ով Աստուած, դուն՝ որ այնքան ողորմած ես.
Բո՛ւ անսահման գթութեամբդ իմ յանցանքս ներէ ինձի:
Ամբողջութեամբ մաքրէ զիս իմ անօրէնութենէս, եւ իմ մեղքէս զիս սրբէ:
Գիտեմ, յանցանք գործեցի, մեղքս բնաւ միտքէս չ'ելլեր:
Քեզի, միայն քեզի դէմ մեղանչեցի, Տէր,
գործեցի այն՝ ինչ որ դուն չարիք կը նկատես:
Ուստի ներումիդ ցօղով սրբէ զիս, եւ պիտի մաքրուիմ,
լուա զիս, եւ ձիւնէն աւելի մաքուր պիտի ըլլամ:
Մաքուր սիրտ մը հաստատէ մէջս, ով Աստուած,
նոր եւ ուղիղ հոգի դիր իմ ներսիդիս:
Ներկայութենէդ մի գրկեր զիս, Տէր,
եւ ԲՈՒ Սուրբ Հոգիդ թող չլքէ զիս:
Փրկութեանդ ցնծութիւնը տուր ինձի,
եւ ԲՈՒ կամփիդ հնազանդ հոգի մը դիր իմ մէջս:
Եթէ զոհ կամենայիր՝ պիտի մատուցանէի,
բայց ողջակէզ դուն չես ուզեր:
Ուզած զոհդ գոյնումով լի հոգի մըն է, ով Աստուած,
հետեւաբար մի մերժեր գոյնումալից եւ ընկնուած իմ սիրտս:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ԲՈՒ հոգեւոր լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ ԲՈՒ արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԺ

ԴԱՆԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ
4:1-18 ԳԼԽ

ՆԱԲՈՒԳՈՂՈՍՏՈՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՐԱԶԸ

«Բարձրեալը կը փրկէ մարդոց թագաւորութեանը վրայ ու զանհկա իր ուզածին կու տայ» (17, 25, 32 հմր):

Պահը հասած է, որ Նաբուգոդոնոսոր թագաւորը խոստովանի ու վկայէ Բարձրեալ Աստուծոյ իրեն ըրած նշաններն ու հրաշքները. «**Անոր նշանները որքան մեծ ու հրաշքները որքան զօրաւոր են. անոր թագաւորութիւնը յաւիտենական թագաւորութիւն է ու անոր իշխանութիւնը դարեւ դար կը մնայ**» (3 հմր):

Ընդհանրապէս Նաբուգոդոնոսոր թագաւոր իր փանը մէջ հանգիստ էր ու իր պալատին մէջ կը զուարճանար, սակայն երազ մը փեսաւ, որ զինք վախցուց ու իր գլխուն փեսիւքները զինք խռովեցուցին: Յաճախ որպէս մարդ արարածները կը մոռնանք, որ մեր ունեցած հարստութիւնը, հանգիստը ու զուրանութիւնը Աստուծոյ կողմէ փրութեամբ պարգեւներ են, սակայն այդ բոլորը մեզի կը վերագրենք, որուն հետեւանքը կ'ըլլայ հպարտութիւն, ամբարտաւանութիւն եւ եսակեդրոն կեանք: Ահա ճիշդ այդպիսին եղած էր նաեւ Նաբուգոդոնոսորի կեանքը, որուն համար ալ Աստուծոյ փարբեր ձեւերով կը միջամտէ, որպէսզի անհկա դարձի գայ, ապաշխարէ ու փրկուի, այլապէս այդ երեւոյթը զինք դէպի կորուստ կը փանի:

Այս հատուածը կը ներկայացնէ մեզի, Նաբուգոդոնոսորի կեանքի օրինակովը, դարձի, ապաշխարութեան օրինակ մը, թէ որքան զգուշ պէտք է ըլլալ չիյնալու հպարտութեան գիրկը, որ մեզ դիւրաւ կը հեռացնէ Աստուծմէ: Միւս կողմէ, ապաշխարութիւն կը նշանակէ նաեւ մտքի փոփոխութիւն, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ. «Ուստի մոռցէք ձեր հին ինքնութիւնը, այսինքն՝ ձեր նախկին ապրելակերպը, որ խաբուսիկ ցանկութիւններով ապականած էր, վերանորոգուեցէք հոգիով՝ ձեր մտածելակերպը փոխելով, եղէք նոր մարդ մը՝ Աստուծոյ պարկերին համաձայն սրբեղծուած, եւ ապրեցէք ճշմարիտ կեանքը՝ արդարութեամբ ու սրբութեամբ» (Եփես 4:22-24):

Ահա, երկրորդ անգամ ըլլալով, Նաբուգոդոնոսոր երազ մը կը փեսնէ, եւ ինչպէս առաջին երազի պարագային էր, այս անգամ եւս երազի ճամբով Աստուծոյ ցոյց կու տայ, թէ ինչպիսի վախճան պիտի ունենայ: Ուստի, խորքին մէջ այս երազները առիթներ են թագաւորին, որպէսզի անդրադառնայ իր ընթացքին, դարձի գայ, որպէսզի փրկուի, այլապէս դատապարտութիւն կը սպասուի: Որովհետեւ ի վերջոյ, այս հատուածը նաեւ ցոյց կու տայ Աստուծոյ անսահման սէրը հանդէպ մեղաւոր մարդ արարածին, որովհետեւ Աստուծոյ մեղաւորին մահը չ'ուզեր, այլ անոր դարձը եւ փրկութիւնը:

Ահա երազին մէջ թագաւորը ծառ մը փեսաւ, եւ այդ ծառը, «որ մեծցաւ եւ ուժովցաւ ու անոր բարձրութիւնը միջեւ երկինք հասաւ», բայց «**Բարձրեալին վճիռը հասաւ, որ այդ ծառը կտրուի, մարդոց մէջէն վռնուեն եւ անոր բնակութիւնը ըլլայ դաշտի անասուններուն հետ, եւ անոր վրայէն եօթը ժամանակ պիտի անցնի, մինչեւ գիտնաս թէ մարդոց թագաւորութեանը վրայ Բարձրեալը կը փրկէ ու զանհկա իր ուզածին կու տայ**» (17 հմր):